

Г.В. НИКОГОСЯН

ЭТИМОЛОГИЯ АРМЯНСКИХ СЛОВ ՆԱԽԱՐԱՐ, ՆԱՀԱՆԳ, ՆԱՀԱՊԵՏ,  
ԻՇԽԱՆ, ԲԴԵՇԽ, ԱՇԽԱՐՀ

Проведен анализ ряда армянских слов с начальным компонентом նախ-/նահ- (նախարար, նահապետ, նահանգ), а также слов իշխան, բդեշխ, աշխարհ. Сравнение этих слов с некоторыми индоевропейскими и неиндоевропейскими языками показывает, что древнейшее значение компонента նախ-/նահ- «смотреть, видеть». Следуя этой закономерности, можно предположить, что настоящим корнем в армянских словах իշխան, բդեշխ, աշխարհ является видоизмененный корень աչք.

**Ключевые слова:** этимология слов, նախարար, նահապետ, նահանգ, իշխան, բդեշխ, աշխարհ, индоевропейские и неиндоевропейские языки.

G.V. NIKOGHOSYAN

ETYMOLOGY OF THE ARMENIAN WORDS  
ՆԱԽԱՐԱՐ, ՆԱՀԱՆԳ, ՆԱՀԱՊԵՏ, ԻՇԽԱՆ, ԲԴԵՇԽ, ԱՇԽԱՐՀ

Several Armenian words with the component նախ-/նահ- (նախարար, նահապետ, նահանգ), as well as the words իշխան, բդեշխ, աշխարհ have been studied. The comparison of some Indo-European and non-Indo-European languages shows that the oldest meaning of the component նախ-/նահ- is «to look, to see». Following this assumption, we may conclude that the real meaning of the root in the words իշխան, բդեշխ, աշխարհ is the Armenian word աչք «eye».

**Keywords:** նախարար, նահապետ, նահանգ, իշխան, բդեշխ, աշխարհ, Indo-European languages, non-Indo-European languages.

ՀՏԴ 81'373.43:821.19

Լ.ՈՒ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԴԱՐՁՎԱԾՔԱՅԻՆ ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Գ. ՄԱՀԱՐՈՒ  
«ԵՌԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՎԻՊԱՇԱՐՈՒՄ

Ներկայացվում են Գ. Մահարու «Եռագրություն» վիպաշարում առկա դարձվածքային նորակազմությունների առանձնահատկությունները, լուսաբանվում այդ կառույցների համագործածական բառապաշար կամ գրական լեզու մուտք գործելու միտումները:

**Առանցքային բառեր.** դարձվածք, նորաբանություն, խոսակցական լեզու, գրքային ոճ, դարձվածքային տարբերակներ:

Դարձվածքային նորակազմությունները, ի տարբերություն բառայինների, ձևավորվելով խոսակցական և գրական բառաշերտերում, հեշտությամբ կարող են վերածվել համագործածական լեզվական միավորների և, մուտք գործելով

գործուն բառապաշար, վերածվել պոստենցիալ դարձվածքների: Ինչպես նկատում է լեզվաբան Խ. Բադիկյանը, «լեզվական նորամուծությունների գոյացումը, մանավանդ բառապաշարի և դարձվածքների ասպարեզում, հար և նման է ժողովրդական բանահյուսության ստեղծմանը. նրանք ևս, վերջինիս նման, ծագումով անհատական են, մշակումով հավաքական» [1, 98]:

Լեզվաբանի նշած «ծագումով անհատական» դարձվածքային նորամուծությունների ակունքներից մեկն էլ գեղարվեստական գրականությունն է: Դրանց շնորհիվ գրական երկը ձեռք է բերում ժողովրդայնություն, պատկերավորություն ու հուզականություն, կերպարային խոսքը դառնում է բնական ու նպատակասլաց: Ուստի դարձվածաբանական ուսումնասիրությունների շարքում էական նշանակություն ունի առանձին հեղինակների կողմից ստեղծված դարձվածքային նորակազմությունների հետազոտությունն ու դրանց տեսակային-տարբերակային համակարգումը:

Այս առումով առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Գուրգեն Մահարու «Եռագրություն» ինքնակենսագրական վիպաշարը [2], որի «Մանկություն», «Պատանեկություն» և «Երիտասարդության սեմին» վիպակներում անկեղծ ու բնական գույներով արտացոլվում է 20-րդ դարասկզբի գողգոթայով անցած մի ողջ սերնդի պատմությունը:

«Եռագրությունը» հարուստ է ոչ միայն արդեն իսկ համագործածական բնույթի *միջոճական, բանավոր խոսակցական և գրքային* դարձվածքներով [3], այլև 100-ից ավելի դարձվածքային նորակազմություններով ու տարբերակներով: Եվ դա բնական է, քանի որ Գուրգեն Մահարին ապրել և ստեղծագործել է անցումային մի ժամանակաշրջանում, երբ ցեղասպանությանն ու գաղթին հետևել են նորովի ձևավորվող հասարակական կյանքի սոցիալ-քաղաքական ու բարոյահոգեբանական վայրիվերումները:

Մահարու «Եռագրության» նորակազմ դարձվածքների և դարձվածքային արտահայտությունների գերակշիռ մասը գրքային բնույթի են: Պատճառը թերևս այն ժամանակաշրջանն ու միջավայրն են, որոնցով անցնում է հարազատ Վանին հրաժեշտ տվող, գաղթի տառապանքներով անցնող և ի վերջո որբանոցներում հանգրվանող պատանին, որի լեզվամտածողությունը ձևավորվում է ապագա գրողների ու մտավորականների միջավայրում:

Ընդհանուր առմամբ հեղինակային նորակազմություններն ունենում են դիպվածայինի արժեք, քանի որ, կերպարների տիպականացում ու կոլորիտային լեզվաոճական միջավայր ապահովելով հանդերձ, կիրառություն չեն գտնում համագործածական լեզվաշերտերում և չեն վերածվում պոստենցիալ դարձվածքների: Դրանք «գրեթե միշտ մնում են խոսքային մակարդակում և, ինչպես որ

աննկատելի ստեղծվում են, այդպես էլ մոռացվում են» [4], սակայն, միաժամանակ, ստեղծվելով և գործածվելով հիմնականում գեղարվեստական գրականության ոլորտում, ունենում են իրենց կարևոր նշանակությունը. հենց դրանց շնորհիվ է, որ «հեղինակը հաճախ կարողանում է արտահայտել ոճական նրբերանգներ, պատկերավոր, դիպուկ դարձնել իր խոսքը» [5]:

Ասվածի վկայությունն են վիպաշարի գրքային բնույթի հեղինակային դարձվածքները, որոնք սերտորեն առնչվում են այդ շրջանում ձևավորվող հայ գրական միջավայրի վերամաքարձ լեզվամտածողությանը: Այդպիսի օրինակներ են.

*անժպիտ Բաքու, անմահության զանգը հնչել, աշխարհի բոլոր հայելիները վկա (333), ապրել ցիտարներով, աստվածների երգ (377)* [սեր], *դժոխային կին, բարոյական զանգակարուն (177), դանթեական խուճապ, զգացմունքների կապկություն (254), զգացմունքների ջերմաստիճանի արհեստական բարձրացում (254), կամքի ու մաքրության գրանիտ (164), հեռավոր օրերի ոսկե գիրք (51), հիշողության աղմուկ (178), հիշողության կապույտ քարտեզ (7), շեկ ժպիտ (215), մորթերի արնամշուշ (64), սեր ճովողել (364), վիշտը հրամանատար լինել (342), ուր երկու խենթ՝ երրորդը չի խանգարի (193), քաղաքավարության պարտք տալ (266)* և այլն:

«Երիտասարդության սեմին» վեպում դրսևորվում է նաև հասունացող երիտասարդի լեզվամտածողությունը, ով, յուրովի արձագանքելով ժամանակի հասարակական-քաղաքական կյանքին ու իրադարձություններին, արդեն ունի դրանց տրվող իր գնահատականները:

Նոր ձևավորվող մտավորականությունն ու գրական միջավայրը ներկա-յացվում են նուրբ հումորով, սրամտությամբ ու բառախաղով: Օրինակ.

*տիկնանման օրհորդ (226), օրհորդանման տիկին (226), Դաղբաշյան բառարանն անգիր անել (327), մանուկ քնել, պատանի զարթնել (51), պատանի դառնալ մի գիշերում (51), Ձերդ իվանիչություն (280), պառնասական զգացմունքներ (257), պառնասական հոգառություն (256), Պառնասի հորթեր (257), հրապույրից զրկված պչրուհու ժպիտ (50), Մեծ այր [ամուսնական վճիռ] (252, 357), նարեկացիություն անել [կեղծ կլասիցիզմ] (364), սախարհի լիրիզմ (364), ուր երկու խենթ՝ երրորդը չի խանգարի (193)* և այլն:

Մինչդեռ քաղաքական բնույթի դարձվածքներն առանձնանում են իրենց հեզնական, քամահրական, երբեմն էլ ծաղրական երանգով: Օրինակ.

*արարարյան միֆի ոսկե դարաշրջան (395), հայի վրեժխնդիր աստված, հին ու նոր օրերի լրբացած ենիչերիներ [դաշնակցականներ] (382), մեկ բաժակ թեյ և հարյուրմեկ տակառ քաղաքականություն (228), նավթ լցնել այրվող պատմության վրա (407), սառը ջուր լցնել հայկական հարցի քրտնած գլխին (401),*

սպարտակյան շարժում [բուլճևիզմ] (389), վարակիչ հավատ (404), փեպորները փոխել, նոր փեպոր հագնել (233), քիթ սրբել սպիտակ թաշկինակով (407), փուչ դպրոց (257), փուչ ուղղություն (257), ոսկե գրիչ, պատմության ոսկե մշուշ (394), բնախոսական հեկեկանք (391), գաղափարական տեռորիստ (346), կոմունիզմի շենքի պատուհանների ապակիները գցել (216), գեպը նեպվել նորից դուրս չգալու համար (78) ևն:

Վիպաշարում կան նաև ժողովրդախոսակցական բնույթի դարձվածքային նորակազմություններ, որոնք բառարաններում չեն հանդիպում: Դրանք ևս կարելի է դասել այդ շրջանում երևան եկած նորաբանությունների շարքը, եթե անգամ չեն ստեղծվել Մահարու կողմից, բայց խոսակցական լեզվաշերտից վերցվելով ու մշակվելով հարստացրել են հայերենի դարձվածապաշարը: Օրինակ՝

գեպնին նայող մարդուց վախեցիր (341), երկուսի մեռելաճաշը մի պղնձում եփել (197), հաց ձեր փորին (397), Հիսուսը կանչեր է (37, 67), հոտն ի քթիս, ցավն ի սրտիս (178), կույրի համար այստեղ թե Բաղդադ՝ մեկ հաշիվ է (386), ճանճի քամին հողմադացին օգուտ է (216), մկան մեզը ջրադացին օգուտ է (216), շապիկ-վարդիքով [աղքատ] (99), շիշ կուլ տված (37), չափել սենյակի լայնքն ու երկայնքը (340), տաների ախոռ, կապերի հորթի կշտին՝ ձեն չէր հանի (397), փաշայական ընդունելություն (267), փարախից փախած գառ (254), փղեր կլլել (327), փողը գալիս է կոպեկներով, գնում ռուբլիներով (243), քարը վարպետին կգա (350) և այլն:

Վիպաշարի նորաբանություններում շատ են նաև կազմախոսական (սոմատիկ) դարձվածքները, որոնց մեջ գերակշռում են *արյուն, սիրտ, աչք* մարմնամասերը: Օրինակ՝

արյան տոն (118), աչքերի տոն (118), աստված իջեր՝ արյուն հոտոտեր [երգի տողեր] (357), սիրտը ավանտով փրոփել (149), սիրտը ծխել որպես խունկ (200, 240), սրտի տոն (118), սրտից սիրտ ձգել թելեր (134), հիանալ մինչև ականջները (367), սկսնակի կոնակի համար ծանր մտրակ (255), ուղեղի թելերից կախվել (50), մի աչքում՝ արյուն, մյուսում՝ արցունք (342), նայել կավե արձանի աչքերով (331), ցուցամատը դնել ճակատին [մտածել] (260) և այլն:

Հանդիպում են նաև գունանուններով կազմված նորաբանություններ: Օրինակ՝

սպիտակ սատանա (81), սև դանակով կտրել (95), սև խաչ դնել վրան (165), սև ջուր թափել երկնքից (227), սև ձյուն իջնել երկնքից (207) և այլն:

Բնության և կենդանական աշխարհին առնչվող դարձվածքների օրինակներ են՝

կապվային տուալետ (238), հարբուխ ընկած դեղձանիկ (257), հեռավոր օրերի մրգաստան (51), ննջել որպես մահիկ և արթնանալ որպես լուսին (51), քաղցրացած արև (410) և այլն:

Վիպաշարում առկա են նաև դարձվածքային միավորների տարբերակային նորակազմություններ, որոնք կառուցված են խոսակցական լեզվաշերտի հենքով: Օրինակ՝

*առավ-փախավ ժամանակներ* (377) [հմմտ. *առուփախի ժամանակներ*], *գրպանում հողմեր լալ* (225) [հմմտ.՝ *գրպանում քամի խաղալ*], *ջուրը* [հմմտ.՝ *հողը*] *թեթև լինել վրան* (79), *սեղանը մերկացնել* (267) [հմմտ.՝ *սրբել*], *փափուկ* [հմմտ.՝ *նուրբ*] *խնդիր* (179), *փափուկ* [հմմտ.՝ *թույլ*] *սեռի ներկայացուցիչ* (325), *մեկ տախտակի վրա դնել* [հմմտ.՝ *մեկ արշինով չափել*] (290) և այլն:

**Եզրակացություն:** Գ. Մահարու «Եռագրությունը» հարուստ է գրքային և ժողովրդախոսակցական դարձվածքային նորակազմություններով, որոնք թեև ժամանակի մեջ քննություն չեն բռնել՝ այդպես էլ մնալով համագործածական բնույթ չստացած անհատական կառույցներ, սակայն, համահունչ լինելով 20-րդ դարասկզբի հասարակական-քաղաքական լեզվամտածողությանը, արժեքավորվում են որպես այդ ժամանակաշրջանը տիպականացնող գեղարվեստական խոսքի լեզվաոճական միջոցներ:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Բաղիկյան Խ.**, Դարձվածային ոճաբանություն, Ե., 2000, 207 էջ:
2. **Մահարի Գ.**, Երկերի ժողովածու, հ.2, Ե., 1967, 400 էջ:
3. **Հայրապետյան Լ.**, Դարձվածքների ոճական կիրառությունը Գ. Մահարու «Եռագրություն» վիպաշարում // Ճարտարագետ, 2013, Մաս 3, էջ 908-914:
4. **Բաղիկյան Խ.**, Դարձվածային նորաբանություններ // Բանբեր ԵՊՀ, 1992/1, էջ 174-181:
5. **Եզեկյան Լ.**, Հայոց լեզվի ոճագիտություն, Ե., 2003, 376 էջ:

#### Л.У. АЙРАПЕТЯН

#### ФРАЗЕОЛОГИЧЕСКИЕ НЕОЛОГИЗМЫ В «ТРИЛОГИИ» Г. МААРИ

Представлены особенности фразеологических неологизмов в «Трилогии» Г. Маари. Выявляются и анализируются созданные автором фразеологизмы и тенденции обогащения общенационального языка.

**Ключевые слова:** фразеологизм, неологизм, разговорный язык, литературный стиль, фразеологические варианты.

#### L.U. HAYRAPETYAN

#### PHRASEOLOGICAL NEOLOGISMS IN G. MAHRI'S "TRILOGY"

The article presents the features of phraseological neologisms used in G. Mahari's novel series "Trilogy". The article covers the main ways in which the phraseological units created by G. Mahari penetrate the national wordstock or literary language.

**Keywords:** idiom, neologism, spoken language, dialect, literary style, phraseological variants.